ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

№ 10-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ԹԵՎՔԱՆՇԱՆԻ ԵՎ ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի «Ոստիկանության ծառայողի համազգեստի նկարագիրն ու այն կրելու ժամկետները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 4-ի N 886-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1446-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 93-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով, ինչպես նաև ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի «Ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» N 4-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 5-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիայի, ոստիկանության համայնքային

ոստիկանության և քրեական ոստիկանության գլխավոր վարչությունների ծառայողների համազգեստի թևքանշանների և կրծքանշանների միասնական նկարագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրը:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ ***Ա.ՂԱՋԱՐՅԱՆ***

28.10.2025թ.
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ ոստիկանության պետ-ՆԳ
նախարարի տեղակալի 2025 թվականի
հոկտեմբերի 28-ի թիվ 10-Լ հրամանի

Միասնական նկարագիր
ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիայի, ոստիկանության համայնքային ոստիկանության և քրեական ոստիկանության գլխավոր վարչությունների ծառայողների համազգեստի թևքանշանների և կրծքանշանների

1. ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության թևքանշան

Համայնքային ոստիկանության ստորաբաժանման ծառայողները համազգեստի աջ թևքին՝ ուսակարից 60 մմ ներքև, կրում են իրենց ծառայությունը խորհրդանշող թևքանշան: Թևքանշանը՝ 80 մմ x 125 մմ չափերով, կենտրոնում սև կտորի վրա սպիտակ եզրաթելերով ասեղնագործվում է ոստիկանության խորհրդանիշի պատկերով թուր և վահան, իսկ վահանի կենտրոնում՝ աջ կողմից դեղին գույնով ասեղնագրոծված է ոստիկան, ձախ կողմից՝ տղամարդ և երեխա, իսկ կենտրոնական մասի վերևում՝ ներքին գործերի նախարարության շենքը՝ բաց շագանակագույն: Վահանից դուրս՝ աջ և ձախ կողմերում հորիզոնական ասեղնագործված է Հայաստանի Հանրապետության դրոշը (վերևից՝ կարմիր, կապույտ և նարնջագույն): Թևքանշանի վերևում սպիտակ գույնով ասեղնագործված է «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ» բառը, իսկ թևքանշանի ներքևում՝ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառը: Համայնքային ոստիկանության գլխավոր վարչության ծառայողների համազգեստի վրա թևքանշանից վերև սև կիսաշրջանաձև կտորի վրա

ասեղնագործված է «ՀՈԳՎ» բառը, իսկ տարածքային և ենթակա ստորաբաժանումների ծառայողների համար՝ համապատասխան բաժնի անվանումը:

Կրծքանշան

Արտաքին հանդերձանքի բոլոր տեսակների (տարազաբաճկոն, կիսավերարկու, բաճկոն, սվիտեր, վերնաշապիկներ կարճաթև և երկարաթև) աջ կրծքամասում կարվում է ներդիր, որի վրա կպչուն ժապավենով ամրանում է 13X2,5 սմ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» մակագրությամբ բառը: Ձախ կրծքամասում կարվում է վկայականի տարբերանշան (կտորից)-ասեղնագործվում է կտորի վրա գունավոր թելերով, որի վրա նշվում է նաև ծառայողի անձնական համարը և ունի երկկողմանի կպչուն ժապավեն:

2. ՀՀ ՆԳՆ քրեական ոստիկանության թևքանշան

Քրեական ոստիկանության ստորաբաժանման ծառայողները համազգեստի աջ թևքին՝ ուսակարից 60 մմ ներքև, կրում են իրենց ծառայությունը խորհրդանշող թևքանշան 80 մմ X 125 մմ չափսերով: Գունավոր գործվածքե կտորից, կողային մասերը մշակված կարմիր գույնի թելերով, փակ եզրակարող մեքենայով: Վերևում, սև ֆոնի վրա ջակարդով ասեղնագործվում է կիսալուսնաձև «ՔՈԳՎ» բառը, կենտրոնում սև կտորի վրա գունավոր ասեղնագործվում է մասնագիտացված ստորաբաժանման խորհրդանիշը՝ հովազի գլուխ՝ բերանը բաց վիճակում, իսկ ներքևում ասեղնագործվում է «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառը:

Կրծքանշան

Արտաքին հանդերձանքի բոլոր տեսակների (տարազաբաճկոն, կիսավերարկու, բաճկոն, սվիտեր, վերնաշապիկներ կարճաթև և երկարաթև) աջ կրծքամասում

կարվում է ներդիր, որի վրա կպչուն ժապավենով ամրանում է 13X2,5 սմ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» մակագրությամբ բառերը: Ձախ կրծքամասում կարվում է վկայականի տարբերանշան (կտորից)-ասեղնագործվում է կտորի վրա գունավոր թելերով, որի վրա նշվում է նաև ծառայողի անձնական համարը և ունի երկկողմանի կպչուն ժապավեն:

Օպերատիվ արձագանքման վարչության ծառայողների թևքանշան

Օպերատիվ արձագանքման վարչության ծառայողները համազգեստի աջ թևի վրա կրում են ուսակարից 60 մմ ներքև իրենց ծառայությունը խորհրդանշող գունաքողարկող (մուլտիքամ) կտորից թևքանշան 80 մմ X 125 մմ չափսերով: Թևքանշանը կլոր է և վրան ասեղնագործված է ստորաբաժանման խորհրդանիշը՝ հովհազը՝ բերանը բաց վիճակում, ինչպես նաև մասնագիտացված ստորաբաժանման անվանումը «ՕՊԵՐԱՏԻՎ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» ինչպես նաև ասեղնագործված է ստորաբաժանման կարգախոսը «ՈՒԺ, ԿԱՄՔ, ԱՐԻՈՒԹՅՈՒՆ»: Համազգեստի ձախ թևի վրա կրում են ուսակարից 60 մմ ներքև եռանկյունաձև գունաքողարկող (մուլտիքամ) կտորից թևքանշան, որի վրա գրված է «POLICE» գրությունը և ասեղնագործված է ՀՀ ՆԳՆ ոստիկանության զինանշանը:

Օպերատիվ արձագանքման վարչության ծառայողների կրծքանշանները՝



3. ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիա

Ոստիկանության գվարդիայի ծառայողները համազգեստի աջ թևքին՝ ուսակարից 60 մմ ներքև, կրում են իրենց ծառայությունը խորհրդանշող 80 մմ X 125 մմ չափերի թևքանշան: Գունավոր գործվածքե կտորից, կողային մասերը մշակված կարմիր գույնի թելերով, փակ եզրակարող մեքենայով: Մուգ կապույտ ֆոնի վրա ասեղնագործված կամ ջակարտով գլուխը աջ թեքած արծվի պատկեր է: Վերևում՝ կիսալուսնաձև «ՀՀ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ» մեծատառերով բառերն են, իսկ ներքևում՝ կիսալուսնաձև «ԳՎԱՐԴԻԱ» բառը մեծատառերով: Վերևի բառերի անմիջապես տակը հայկական եռագույնն է՝ կիսալուսնաձև ժապավենի տեսքով, իսկ դրանից ներքև, մուգ կապույտ ֆոնի վրա՝ Հայաստանի Հանրապետության քարտեզը:

Կրծքանշան

«POLICE» կրծքանշան:

Համազգեստի կրծքային աջ մասին կպչունակով (կպչունակի կոշտ կողմով) կպնող՝ 40x120 մմ չափսերով, «POLICE»՝ սպիտակ ասեղնագործություն՝ կապտասև կամ սև գործվածքի վրա, եզրերը կարմիր 3 մմ եզրագիծ: Թվերի հաստությունը՝ 4-5մմ, բարձրությունը՝ 20-25մմ:

Կոչումների կտորե կրծքանշան

Համազգեստի կրծքային մասի կենտրոնում կպչունակով (կպչունակի կոշտ կողմով), կափույրին կպնող 5x10 սմ չափսերով: Կոչումները արծաթագույն ասեղնագործություն՝ կապտասև կամ սև գործվածքի վրա: Ոստիկանության գնդապետ, փոխգնդապետ և մայոր կոչումներ ունեցող ծառայողներինը՝ ներքնամասի կարմիր եզրագծին զուգահեռ 2 արծաթագույն մակաշերտով և ասեղնագործած 20 մմ արծաթագույն աստղերով, կապիտան, ավագ լեյտենանտ, լեյտենանտ կոչումներ ունեցող ծառայողներինը 1 արծաթագույն մակաշերտով և ասեղնագործած 13 մմ

արծաթագույն աստղերով, ավագ ենթասպա, ենթասպա կոչում ունեցող ծառայողներինը՝ առանց մակաշերտի, ասեղնագործած 13 մմ արծաթագույն աստղերով, ավագ կոչում ունեցող ծառայողներինը՝ առանց մակաշերտի, ասեղնագործած 20 մմ արծաթագույն ուղղահայաց նշանաքուղ, ավագ սերժանտ կոչում ունեցող ծառայողներինը՝ առանց մակաշերտի, ասեղնագործած 20 մմ արծաթագույն հորիզոնական նշանաքուղ, սերժանտ և կրտսեր կոչում ունեցող ծառայողներինը՝ առանց մակաշերտի, ասեղնագործած 10 մմ լայնությամբ արծաթագույն հորիզոնական նշանաքուղեր (նշանաքուղերի միջև հեռավորությունը 2 մմ):



Ծառայողական վկայականի համարային կրծքանշան:



Համազգեստի կրծքային ձախ մասին կպչունակով (կպչունակի կոշտ կողմով)՝ 40x120 մմ չափսերով, թվերը՝ սպիտակ ասեղնագործություն՝ կապտասև կամ սև գործվածքի վրա, եզրերը կարմիր 3 մմ եզրագիծ: Թվերի հաստությունը՝ 4-5 մմ , բարձրությունը՝ 20-25 մմ: